Ֆիզիկական անձանց հաշիվների բացման նպատակով անհրաժեշտ է ներկայացնել հետևյալ փաստաթղթերը.

- անձը հաստատող փաստաթղթի պատճենը,
- անհատ ձեռնարկատեր լինելու դեպքում գրանցման համարը և ՀՎՀՀ-ն կամ համարժեք այլ համարները ներառող փաստաթղթ(եր)ի պատճեն(ներ)ը,
- հանրային ծառայությունների համարանիշը հավաստող կամ հանրային ծառայությունների համարանիշ չունենալու դեպքում՝ դրա բացակայությունը հավաստող տեղեկանքի պատճենը,
- հայտարարություն իրական շահառուի վերաբերյալ,
- գրություն բնակության և հաշվառման վայրի մասին, եթե դրանք նշված չեն ներկայացված այլ փաստաթղթերից որևէ մեկում,
- գրություն կենսական շահերի կենտրոնի մասին, եթե հաճախորդն օտարերկրյա անձ է և կենսական շահերի կենտրոնը նշված չէ ներկայացված այլ փաստաթղթերից որևէ մեկում,
- Ընկերության որևէ ներքին իրավական ակտով պահանջվող ցանկացած այլ փաստաթուղթ: